

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N°1

ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի 2020-2021 ուս. տարվա

գիտական խորհրդի նիստի

ք.Երևան

11 սեպտեմբերի 2020թ.

**Ներկա էին՝** գիտխորհրդի 24 անդամներից 19–ը (ներկայաթերթիկը կցված է):

**Նախագահ՝** ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ք.գ.դ., պրոֆ. Ա. Սադյան

**Գիտական քարտուղար՝** ք.գ.թ. Ա. Դադայան

**ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝**

1. ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի գիտական խորհրդի 2020-2021 ուսումնական տարվա աշխատանքային պլանի նախագծի քննարկում և հաստատում: **Ձեկուցող՝ Ա. Դադայան**
2. Ֆարմացիայի ինստիտուտում 01.09.2018թ. - 31.08.2020թ. ժամանակահատվածում թեմատիկ ֆինանսավորմամբ իրականացված գիտահետազոտական աշխատանքների ամփոփիչ հաշվետվությունների քննարկում և հաստատում:  
**Ձեկուցողներ՝**
  - կ.գ.դ., պրոֆեսոր Սուսաննա Բադայան
  - կ.գ.թ., դոցենտ Անահիտ Հովհաննիսյան
3. Ֆարմացիայի ինստիտուտի Ֆարմաթեխնոլոգիայի և ՖԷԿ-ի ամբիոնի ասիստենտ, ք.գ.թ. Անի Դադայանի կողմից ներկայացված «Գալենային և նորգալենային դեղապատրաստուկների արդյունաբերական արտադրությունը» ուսումնամեթոդական ձեռնարկի արտաքին գրախոս նշանակելու հարցը: **Ձեկուցող՝ Ֆարմաթեխնոլոգիայի և ՖԷԿ-ի ամբիոնի վարիչ, կ.գ.թ. դոցենտ Ա. Հովհաննիսյան**
4. Ֆարմացիայի ինստիտուտի Ֆարքիմիայի և ֆարմակոգնոզիայի ամբիոնի ասիստենտ, ք.գ.թ. Ավետիս Հովհաննեսի Ծատուրյանի կողմից ներկայացված «Բարձրարդյունավետ հեղուկային քրոմատոգրաֆիայի տեսական և կիրառական հիմունքները» վերնագրով ուսումնամեթոդական ձեռնարկի տպագրության երաշխավորման հարցը: **Ձեկուցող՝ Ա. Դադայան**
5. ԺԵ.00.01 – «Դեղագիտություն» մասնագիտությամբ դեղագործական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար Լիլիթ Ֆերդինանդի Ղազարյանի «Հակամանրէային դեղերի կիրառման մշտադիտարկման և գնահատման համակարգի մշակումը Հայաստանի հանրապետությունում» թեմայով ատենախոսության վերաբերյալ ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի՝ որպես առաջատար կազմակերպության, պաշտոնական կարծիքի քննարկում և հաստատում:  
**Ձեկուցող՝ Լիլիթ Ղազարյան**  
**Ղեկավար՝ ք.գ.դ., պրոֆ. Հ.Վ. Թովչյան**
6. Ընթացիկ հարցեր:
  - Ֆարմացիայի ինստիտուտի ուսանողներից անվանական կրթաթոշակ նշանակելու հարցը: **Ձեկուցող՝ Ս. Վարդապետյան**

## ՔՆՆԱՐԿԵՑԻՆ ԵՎ ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի գիտական խորհրդի 2020-2021 ուս. տարվա աշխատանքային պլանի նախագծի քննարկում և հաստատում:

**Լսեցին՝** ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի գիտական քարտուղար ք.գ.թ. Ա. Դադայանին, ով ներկայացրեց Ֆարմացիայի ինստիտուտի գիտական խորհրդի 2020-2021 ուս. տարվա աշխատանքային պլանի նախագիծը: Նա նշեց, որ գիտական խորհրդի անդամները նախապես ծանոթացել են աշխատանքային պլանի նախագծին՝ դիտողություններ և առաջարկություններ անելու համար: Ա. Դադայանը հավելեց, որ գիտխորհրդի աշխատանքային պլանի նախագիծը կազմելիս հաշվի են առնվել տարվա ընթացքում ներկայացված առաջարկներն ու դիտողությունները: Ելույթ ունեցավ գիտխորհրդի նախագահ Ա. Սադյանը, ով նշեց, որ եթե այլ դիտողություններ և առաջարկություններ չկան, ապա պետք է հաստատել գիտական խորհրդի 2020-2021 ուս. տարվա աշխատանքային պլանը:

**Որոշեցին՝** (միաձայն) հաստատել գիտական խորհրդի 2020-2021 ուս. տարվա աշխատանքային պլանը:

2. Ֆարմացիայի ինստիտուտում 01.09.2018թ. - 31.08.2020թ. ժամանակահատվածում թեմատիկ ֆինանսավորմամբ իրականացված գիտահետազոտական աշխատանքների ամփոփիչ հաշվետվությունների քննարկում և հաստատում:

**Լսեցին՝**

- 2.1. ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի Ֆարմաթեխնոլոգիայի և ֆարմացիայի էկոնոմիկայի ու կառավարման ամբիոնի վարիչ, կ.գ.թ. Ա. Հովհաննիսյանին, ով համառոտ ներկայացրեց «Հակաբիոտիկների նկատմամբ կայուն *Pseudomonas* ցեղին պատկանող շտամերի պլազմիդների գենետիկական հետազոտությունը» վերնագրով թեմայի 01.09.2018թ.-31.08.2020թ. ժամանակահատվածի ամփոփիչ հաշվետվությունը: Հաշվետվությունը ներառում է ՀՀ պետական բյուջեից գիտական եվ գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորմամբ կատարված թեմայի շրջանակներում ստացված արդյունքները: Ա. Հովհաննիսյանը նշեց, որ հակաբիոտիկների նկատմամբ կայունություն ապահովող գեների հորիզոնական տարածման գործընթացում մեծ դեր են խաղում պլազմիդները, որոնց հատկությունների ուսումնասիրումը անհրաժեշտ է հակաբիոտիկակայունության դեմ պայքարի համար:

Հաշվետու ժամանակահատվածում բացահայտվել և ուսումնասիրվել են հողում տարածված բազմաթիվ հակաբիոտիկների (ամպիցիլին, ամոքսիցիլին, աուգմենտին, ցեֆիքսիմ և այլն) նկատմամբ կայուն *Pseudomonas* ցեղի տարբեր տեսակներ: Աշխատանքի իրականացման արդյունքում տրվել է հողից անջատված *Pseudomonas* ցեղի տարբեր շտամերի հակաբիոտիկների նկատմամբ կայունության գենետիկական բնութագիրը՝ պլազմիդների առկայությունը, կայունության գեների առկայությունը և դրանց լոկալիզացիան մանրէի բջջում, գեների փոխանցման հնարավորությունը մեկ տեսակից մյուսին: Այս արդյունքները և եզրակացությունները կարող են մեծ արժեք ունենալ հակաբիոտիկների նկատմամբ կայուն շտամերի առաջացման և տարածման կանխման գործում:

Ստացված տվյալների հիման վրա հրատարակվել են 6 գիտական հոդված և 6 թեզիս:

- 2.2 ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի Կենսաբժշկագիտության ամբիոնի պրոֆեսոր, կ.գ.դ. Սուսաննա Բադայանի ղեկավարած «Հայաստանի ագարիկոմիցետային դեղասնկերի միկոբիոտայի կարգաբանական և էկոլոգիական վերլուծությունը՝ դրանց կենսատեխնոլոգիական ներուժի գնահատման և գենետիկական ռեսուրսների պահպանման նպատակով» վերնագրով թեմայի 01.09.2018թ. - 31.08.2020թ. ժամանակահատվածի ամփոփիչ հաշվետվությունը:

Հաշվետվությունը ներառում է ՀՀ պետական բյուջեից գիտական եվ գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորմամբ կատարված թեմայի շրջանակներում ստացված արդյունքները:

Ս. Բադայանը տեղեկացրեց, որ թեմայի հիմնարար և կիրառական խնդիրների իրականացման ընթացքում գնահատվել է Հայաստանի բազիդիալ ագարիկոմիցետային դեղասնկերի (բաժին Basidiomycota, դաս Agaricomycetes) առանձին կարգաբանական խմբերի / տեսակների կենսաբանական ռեսուրսները, ուսումնասիրվել է հեռանկարային տեսակ / շտամերի մորֆո-էկոլոգիական և դեղաբանական հատկությունները՝ սննդի, բուժիչ և կոսմետիկ միջոցների կենսատեխնոլոգիական արտադրության, ինչպես նաև կենսաբժշկության մեջ կիրառման նպատակով:

Ստացված տվյալների հիման վրա հրատարակվել են 8 գիտական հոդված և 12 թեզիս:

- Որոշեցին՝** (միաձայն) հաստատել գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում կատարված աշխատանքների տարեկան հաշվետվությունները:

3. **Ֆարմացիայի ինստիտուտի Ֆարմտեխնոլոգիայի և ՖԷԿ-ի ամբիոնի ասիստենտ, ք.գ.թ. Անի Դադայանի կողմից ներկայացված «Գալենային և նորգալենային դեղապատրաստուկների արդյունաբերական արտադրությունը» ուսումնամեթոդական ձեռնարկի արտաքին գրախոս նշանակելու հարցը:**

**Լսեցին՝** Գիտխորհրդի նախագահ Ա. Սաղյանին, ով տեղեկացրեց, որ Ֆարմտեխնոլոգիայի և ֆարմացիայի էկոնոմիկայի ու կառավարման ամբիոնի ասիստենտ, ք.գ.թ. Անի Դադայանի կողմից գիտական խորհուրդ է ներկայացվել «Գալենային և նորգալենային դեղապատրաստուկների արդյունաբերական արտադրությունը» վերնագրով ուսումնական ձեռնարկը՝ արտաքին գրախոսման համար: Աշխատանքը քննարկվել է ամբիոնում և մեթոդական խորհրդի նիստում (նիստ N°1, առ 09. 01. 2020թ., քաղվածքը կցվում է) և ստացել դրական արձագանք: Աշխատանքի վերաբերյալ կարծիք է ներկայացրել նույն ամբիոնի վարիչ կ.գ.թ., դոցենտ Անահիտ Հովհաննիսյանը (կարծիքը կցվում է):

Ա. Հովհաննիսյանը նշեց, որ աշխատանքը բովանդակալից է, ներկայացված է պարզ և մատչելի, համապատասխանում է Ֆարմտեխնոլոգիա (գործարանային) առարկայի ուսումնական ծրագրին: Ուսումնամեթոդական ձեռնարկի կառուցվածքը համապատասխանում է ընդունված պահանջներին, ներկայացված է և՛ տեսական մաս, և՛ լաբորատոր (գործնական) աշխատանքների համար անհրաժեշտ ցուցումներ: Յուրաքննաչուր թեմայի ավարտին տրված են հարցեր և առաջադրանքներ, որոնք հնարավորություն կտան ուսանողներին ստուգել իրենց գիտելիքները և թեմայի յուրացման

աստիճանը: Ձեռնարկն արժեքավոր է նաև այն առումով, որ լրացնում է վերը նշված բնագավառում մայրենի լեզվով նմանօրինակ գրքերի բացակայության պակասը: Գիտխորհրդի նախագահ Ա. Սաղյանը ևս շեշտեց աշխատանքի կարևորությունը և առաջարկեց ներկաներին երաշխավորել այն՝ արտաքին գրախոսության ուղարկելու համար:

**Ելույթ ունեցան՝** գիտխորհրդի անդամներ Ս. Վարդապետյանը, Մ. Շեյրանյանը, Ա. Մկրտչյանը, ովքեր ևս կարևորեցին ուսումնական ձեռնարկի անհրաժեշտությունը, առաջարկեցին շարունակել դրա տպագրության գործընթացը: Ելույթ ունեցողներն առաջարկեցին աշխատանքն արտաքին արտաքին գրախոսման ուղարկել Երևանի Մխիթար Հեռացու անվան պետական բժշկական համալսարան:

**Որոշեցին՝** (միաձայն) Ա.Ս. Դադայանի կողմից ներկայացված ուսումնական ձեռնարկն արտաքին գրախոսման ուղարկել ԵՊԲՀ:

4. **Ֆարմացիայի ինստիտուտի Ֆարքիմիայի և ֆարմակոգնոզիայի ամբիոնի ասիստենտ, ք.գ.թ. Ավետիս Հովհաննեսի Ծատուրյանի կողմից ներկայացված «Բարձրարդյունավետ հեղուկային քրոմատոգրաֆիայի տեսական և կիրառական հիմունքները» վերնագրով ուսումնամեթոդական ձեռնարկի տպագրության երաշխավորման հարցը:**

**Լսեցին՝** Ֆարմացիայի ինստիտուտի Ֆարքիմիայի և ֆարմակոգնոզիայի ամբիոնի ասիստենտ, ք.գ.թ. Ավետիս Հովհաննեսի Ծատուրյանի կողմից ներկայացված «Բարձրարդյունավետ հեղուկային քրոմատոգրաֆիայի տեսական և կիրառական հիմունքները» վերնագրով ուսումնամեթոդական ձեռնարկի տպագրության երաշխավորման հարցը:

**Ելույթ ունեցավ՝** Ֆարմացիայի ինստիտուտի տնօրեն ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ա. Սաղյանը, ով նշեց, որ Ա.Հ. Ծատուրյանի կողմից ներկայացված աշխատանքը ենթարկվել է ինչպես ներամբիոնային, այնպես էլ՝ արտաքին գրախոսման: Արտաքին գրախոսը (Ստանդարտ Դիալոգ փորձարկման լաբորատորիայի ղեկավար, կ.գ.թ. Կարեն Դարբինյանը) կարևորել է ուսումնական ձեռնարկի անհրաժեշտությունը մագիստրատուրայում դասավանդվող «Դեղանյութերի կառուցվածքի ուսումնասիրման մեթոդներ» առարկայի համար և ձեռնարկում առկա թերությունները շտկելուց հետո՝ այն երաշխավորել տպագրության:

**Որոշեցին՝** (միաձայն) հաշվի առնելով վերոհիշյալ աշխատանքի անհրաժեշտությունն ուսումնական գործընթացի համար՝ այն թույլատրել տպագրության (100 օրինակ տպաքանակով) համալսարանի միջոցների հաշվին:

5. **ԺԵ.00.01 – «Դեղագիտություն» մասնագիտությամբ դեղագործական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար Լիլիթ Ֆերդինանդի Ղազարյանի «Հակամանրէային դեղերի կիրառման մշտադիտարկման և գնահատման համակարգի մշակումը Հայաստանի հանրապետությունում» թեմայով ատենախոսության վերաբերյալ ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի՝ որպես առաջատար կազմակերպության, պաշտոնական կարծիքի քննարկում և հաստատում:**

**Լսեցին՝** Լիլիթ Ղազարյանին, ով մանրամասն ներկայացրեց ատենախոսական աշխատանքը և պատասխանեց հարցերին:

**Ելույթ ունեցան՝** գիտխորհրդի նախագահ, ակադեմիկոս Ա. Սաղյանը, անդամներ՝ կ.գ.թ. Ա. Հովհաննիսյանը, ք.գ.թ. Ռ. Հովհաննեսյանը, ք.գ.թ. Ս. Վարդապետյանը,

ք.գ.թ. Ս. Պետրոսյանը, ովքեր շնորհակալություն հայտնեցին ատենախոսին հետաքրքիր, բովանդակալից և գրագետ հայերենով զեկուցման համար, ուղղեցին իրենց հարցերը և նշեցին դիտողությունները.

1. Համեմատվել են ՀՄ դեղերի ուսումնասիրությունները հիվանդանոցներում՝ տարբեր տարիների տարբեր ամիսներին օրինակ՝ 2014թ. հոկտեմբեր-նոյեմբեր, 2015 թ. փետրվար-մարտ, 2016 թ. վերաբերյալ տվյալները բացակայում են, 2017 թ. մայիս-հունիս ամիսները և եզրահանգել է, որ 2017 թ. նկատվել է ՀՄ դեղերի կիրառման ցուցանիշի անկում, ինչը թույլ չի տալիս կատարել համեմատական վերլուծություն:
2. Ինչո՞վ է պայմանավորված 3.2. ենթագլխում հետազոտված հիվանդանոցների քանակների տարբերությունը և որ՞ բաժանմունքներն են ներառվել հետազոտությունների մեջ:

## 6. Ընթացիկ հարցեր:

### 6.1. Ֆարմացիայի ինստիտուտի ուսանողներից անվանական կրթաթոշակ նշանակելու հարցը:

**Լսեցին՝** Ֆարմացիայի ինստիտուտի փոխսնօրեն ք.գ.թ., դոցենտ Ս. Վարդապետյանին, ով գիտխորհրդի անդամներին տեղեկացրեց, որ 2019-2020 ուսումնական տարում Նազելի Չարչյանի և Լևոն Ռոտինյանի անվան անվանական կրթաթոշակ են ստացել «Ֆարմացիա» մասնագիտության մագիստրատուրայի ուսանողուհի Հասմիկ Արամայիսի Սարգսյանը և 3-րդ կուրսի ուսանողուհի Էմմա Արմենի Մարկոսյանը: Ս. Վարդապետյանը հավելեց, որ Հասմիկ Արամայիսի Սարգսյանը ավարտել է ուսումը, իսկ Էմմա Արմենի Մարկոսյանը գերազանցությամբ շարունակում է ուսումը բակալավրիատի 4-րդ կուրսում, միաժամանակ հանդիսանում է նաև Ֆարմացիայի ինստիտուտի ՈւԽ նախագահը: Նազելի Չարչյանի անվան կրթաթոշակ տրամադրելու համար առաջարկվեց ներկայացնել «Ֆարմացիա» մասնագիտության 4-րդ կուրսի ուսանող Ռուբեն Էդուարդի Իսրայելյանի թեկնածությունը, ով գերազանց առաջադիմությամբ ուսանող է և ինստիտուտի ուսանողական գիտական ընկերության նախագահը:

### **Որոշեցին՝** (միաձայն)

1. Շարունակել «Ֆարմացիա» մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողուհի Էմմա Արմենի Մարկոսյանի՝ Լևոն Ռոտինյանի անվան կրթաթոշակը:
2. Ներկայացնել «Ֆարմացիա» մասնագիտության 4-րդ կուրսի ուսանող Ռուբեն Էդուարդի Իսրայելյանին՝ Նազելի Չարչյանի անվան կրթաթոշակի:

Գիտական խորհրդի նախագահ՝

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ք.գ.դ, պրոֆ.

Ա. Սադյան

Գիտական խորհրդի քարտուղար՝ ք.գ.թ.

Ա. Դադայան